

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանի ուղերձը Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առթիվ

21.09.2017

Հարգելի հայրենակիցներ

Սեպտեմբերի 21-ը մեր համազգային տոնացույցում վաղուց արդեն բացառիկ տեղ է գրավում՝ շուքով նշվելով Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում: Այն համայն հայության դարավոր իդձերի ու երազանքների իրականացման տոնն է, յուրաքանչյուր հայ մարդու հոգու եւ սրտի տոնը, համազգային միասնության ուխտի օրը: Հայ ժողովրդի ազատ ու վճռական կամարտահայտումը, որը հարկ եղավ պաշտպանել հազարավոր թանկագին հայորդիների կյանքի եւ արյան գնով, անշրջելիորեն հաստատեց Հայոց ազատության ու անկախության, շեն ու հզոր հայրենիք կերտելու հարատեւ ուղին:

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Հայաստանի Հանրապետության Անկախության 26-րդ տարեդարձի առթիվ, մաղթում խաղաղությամբ ու արարչագործությամբ լի ժամանակներ, ամենայն բարիք եւ համազգային նորանոր հաղթանակներ:

Լավագույն ցանկություններով՝

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյան